

ՄԱՆԿԱՎԱՐԺՐԻ ԿԱՐԺԱԿԱՐԳ

Պրօք Օսվալդի կարծիքը միջնակարգ դպրոցների բարեփոխութեան մասին.

Ներկայի միջնակարգ դպրոցները և մանաւանդ գիմնազիաները երկար դարերի արդիւնք են: Վերածնութեան դարը նոր կուլտուրա ստեղծագործելու միակ հստակառորութիւնը անտիկ կուլտուրայի վերապրման և յարութեան մէջ էթ գոնում: Յունական և հռովմէական քաղաքակրթութեան իդէալները միջնադարեան գաղաքարից յետոյ պէտք է նոր կեանքը յառաջդիմութեան գործօնները դառնացին: Վերածնութեան դարութանասէրները, գեղարուեսադէաները, փիլիսոփաները, քաղաքագէտները և նոյն իսկ հոգեորականութեան մի գգալի մասը իրենց հայեացքը դէպի անցեալն էին ուղղել և իրենց ստեղծագործած ամեն մի նորութեան մասին այն համոզմանն էին, թէ իրենք դորանով անցեալ կուլտուրայի սկզբունքներն են մարմնացնում նոր ձևերի մէջ: Մարդկութեան տրամադրութեան ահա այս շրջանումը ձևակերպուեց մեր ներկայ գիմնազիաների նախատիպը:

Դպրոցը հասարակական ցանկութիւնների և մզումների մարմնացման ձևերից մէկն է եղել և պէտք է լինի: Ամեն մի կուլտուրական մեծ շարժում՝ ծնել է նաև նոր շրջանի ողուն համապատասխանող դպրոցի մի տիպ: Վերածնութեան դարու ողին իր ճիշտ արտայայտութիւնը գտաւ ժամանակի կարիքներին բաւարարութիւն տուող գիմնազիաների մէջ: Գիմնազիայի հիմնական նպատակը յունական ու լատինական կեանքը ժանօթացումն էր: Այդ դպրոցական տիպը իւր դոյտը լիւնը պահպանել է մինչև մեր օրերը՝ ի հարեւ որոշ փոփոխութիւնների ենթարկուելով: Սակայն անցեալ և ներկայ գիմնազիաների ողին այնքան էլ չի փոխուել. երկուսն էլ հումանիստական են, երկուսն էլ յունական և լատինական կեանքը իդէալական են համարում, երկուսն էլ յունարէն և լատիներէն ւեզուներով աշակերտներին անսահման տանջումն են: Մեր ներկայ գիմնազիան ուրեմն պատմական ժառանգութիւն է, շատ բաներ նա ունի ոչ թէ այն պատճառով, որ ներկայ կուլտուրայի պահանջն է այդ, կամ մարդուն կրթելու նպատա-

կայազմաք եղանակը, այլ որովհետեւ անցեալ դարերում այդ բոլորը անհրաժեշտութիւններ են նկատուել, իսկ այժմ անշարժութեան օրէնքի պատճառուի պեռ իրենց գոյութիւնը պահպանում էն:

Հառնանալի մի երեսյթ է, որ կեանքը երբ աւելի է զարգանում, նոր պահանջներով աւելի է հարստանում, իսկ այդ կեանքի կազմակերպութիւններից ոմանք չեն կարողանում ժամանակին յարմարուել, ծագում է մի մեծ կոնֆլիկտ այդ երկու ոյժերի մէջ, նորը իր պահանջն է գնում, իսկ հինը աշխատառում է դեռ երկարեցնել իր գոյութիւնը: Ներկայ գիմնազիան նոր կուլտուրայի պահանջներին չի բաւարարում կանոնաւոր կերպով: Նրա մէջ անցեալից մնացած աւելորդութիւններ շատ կան գեռ: 19-րդ դարու երկրորդ կեսից մի մեծ շարժում է սկսում զօրեղանալ գիմնազիաների և ընդհանրապէս միջնակարգ դրաբացների գէմ: Այդ շարժումը դեռ հրապարակի վրայ է, դեռ պայքարի և կրքերի առիթ է աալիս և հաւանականաբար կռիւր հանդսաի կը փոխուի միմիայն այն ժամանակ, երբ ներկայի գիմնազիաների մէջ հիմնական բարեփոխութիւններ կը մտնեն: Այս շարժումը առանձնապէս ուժեղ է Գերմանիայում, ուր այդ ուղղութեամբ դարձողներից ամենայայտնիներից մէկն է հաշակաւոր ընադէտ Օսվալդը:

Պրօֆ Օսվալդին զպրոցական հարցը հետաքրքրում է, որովհետեւ նա հայր է, քաղաքացի և գերմանական կուլտուրայի ապագայով ոգեսորուող մէկը: Բերլինում երկու տարի առաջ մօտ երկու հազար ունկնդիրների առաջ արտասանած իր մի ճառի մէջ զարդացնում է ընդհանուր հետաքրքրութիւն ներկայացնող մի քանի հարցեր:

Օսվալդը գանգատուում է որ գալրոցների բարեփոխման հարցերի մշակման համար պաշտօնական մարմինների կողմից կանչուած ժողովներին մասնակցում են յատկապէս զպրոցական գործիչները: Խնդրի ուսումնակրութեան անթոյլատրելի մի ձև է սա, որովհետեւ խորհրդակցութեան են կանչում այն անհամաները, որոնք ներկայ դաշտոցների վատութեան պատճառներից մէկն են: Հասկանալի է, որ նրանք ընդհանրապէս կաշխատեն ցոյց տալ, որ իրենք անզբընական ջանքեր են թափել զպրոցների վարկը բարձր պահելու համար: Նրանք իրենց կամաւոր կերպով գատապարտութեան սեղանի վրայ չեն դնել: Այսպիսի դէպքերում աւելի անմիջապէս չշահագրգռուած կողմերը պէտք է խորհրդակցութեան կանչուեն:

Բայց միթէ՞ Գերմանիան, լաւագոյն զպրոցական տիպերով վաղուցուանից յայտնի այդ կրասիկ երկիրը դպրոցական ըե-

Ֆորմի ճանապարհին կանգնելու կարիքն ունի: Գերմանիան այդ խնդրում չի կարող բացառութիւն կազմել, որ օրի վրայ աւելացող աշակերտական ինքնասպանութիւնները, ներկայի վատառողջ աշակերտութիւնը, վատ կազմած գոլրոցական ծրագրները պարզապես այդ են ցոյց տալիս: Կառավարող շրջաններն անգամ զգացնել են դպրոցական ծրագրների և աշխատանքների վերանորոգութեան կարիքը:

Բարեփոխութիւնների խնդրը, պարզ է, որ հասունացած է: Գոլրոցական խնդիրը զուրս է եկել մասնագետների վրազման նեղ շրջանից և աւելի լայն հասարակական արժէք է ստացել: Մասնաւոր բարեփոխութիւններ կատարելուց առաջ անհրաժեշտ է ծանօթանալ այն մեծ ոկզբունքների հետ, որոնց բացակայութիւնը առիթ է գառնում գոլրոցական չարեքի ընդունում: Այնուամենա և որոնց դորժադրութիւններ է գլխաւորապես կախուած բարեփոխութիւնների յաջողութեամբ գլուխ գալ:

Օստվարդի կարծեքով դիտութիւնն ու ուեր՞ն են այն մեծ գաղափարները, որոնցից գոյն են ստանալու բարենորոգչական փորձերը: Պէտք է գիտութեան միջոցաւ ճանաչել երեխային և ճանաչելուց յետոյ սիրել նըան: Առանց ճանաչողութեան անհնար է ապագայ ուղիների վրայից անսխալ քայլել, ինչպէս ու առանց սիրոյ անկարելի է իսկապէս ազգել մանկան հոգու ներքին նուրբ մասերի վրայ:

Այս երկու մեծ ֆակտորները զբկւում են ազգելու հնարաւորութիւնից, եթէ պակասում է ազատութիւնը: Սա է, որ կեանք, ոդի է տալիս իսկական զիտութեանը և գիտական աշխատանքին: Ազատութեան ոկզբունքը կարողացաւ օրինակելի գարձնել գերմանուկան համալսարանը ամրող աշխարհում: Ազատութեան ոկզբունքը հնարաւորութիւն տուեց սլովիֆեսորներին նիւթերի մշակման նոր ուղիներ գտնելու, նիւթերը դասաւորելու, սիստեմներ կազմելու համար նոր կերպեր մշակելու փորձեր կատարելու: Վերցրէք ազատութեան ոկզբունքը և գերմանական համալսարանը կը կորցնի իր գրաւչութեան էական մասը:

Վերոյիշեալ մեծ գաղափարները և նրանց ոգին պէտք է տերապետէ ինչպէս բարձրագոյն, այնպէս և ամենաատարրական դպրոցում—մանկական պարտիզում: Յրէօրէլը չի տուել այդ հաստատութեան համար հարկաւոր բոլոր և վերջնական աշխատանքի ձեերը: Կա հիմքն է ձգել: Նրա յաջորդները, մանկական պարտիզներում աշխատողները պարտաւոր են նորմանապարհներ որոնել, կամ եղածները իրենց հոգու ութոյնութեանը յարմարեցնել: Ամէն աեղ իշխաղ պէտք է լինի գիտական փորձը:

Փորձը կարողացաւ գիտութիւններին վեր բարձրացնել և կեանք ու ոգի տալ նրանց։ Աւ միթէ այդքան օգտակար գործունէութեան մի ձև կարող է վնասել դպրոցին։ Ոչ, դպրոցն ևս պարտաւոր է հետեւել գիտութիւնների կատարած զարգացման ընթացքին։ Փորձը թոյլ պէտք է տրուի դպրոցներում։ Ընդունակ ուսուցիչը համոզուած պէտք է լինի, որ լաւագոյնը դեռ չի գտնուած, որ նոր ձևերի մասին ևս մտածելը անհրաժեշտ է^{*)}։ Բոլոր ուսուցիչները նոյնկերպ դասաւանդել չեն կարող, ուստի և չի կարելի բռնանալ նրանց անհատականութեան վրայ։ Նրանց թոյլ պէտք է տրուի ստեղծագործող լինել։

Ո՞վ է լաւ ուսուցիչ։ Նա, ով կարողանում է ոգեսրել երեխաններին՝ հաճոյք և բաւականութիւն պատճառելով նրանց, ով կարողանում է ուրախութիւնն ու բաւականութիւնը պարապմունքի կենարոնը դարձնել, նա է իսկական գնահատելի դպրոցական աշխատաւորը։ Մարդկութիւնը ձգտում է իր մէջ դոյցութիւն ունեցող բնական և անմշակ էներգիան փոխարկելով ազատակար էներգիայի։ բարձրագոյն բարեկեն հասնել։ Դպրոցի նպատակն ևս այդ պիտի լինի։ Սակայն ներկայի դպրոցն այդպէս չէ վարւում։ Ներկայի դպրոցը, մանաւանդ միջնակարդը երեխանների էներգիան տնտեսապէս չի շահագործում։ Երեխանների էներգիան ներկայում չի բարձրանում, այլ անժամանակ ոպառւում է։ Դրա պատճառը դպրոցների ծրագրները և կրթական դասաւանդական մեթոդներն են։

Կրթութեան ժամանակ չպէտք է առաջնորդուել միմիայն այն գործափարով, թէ ինչպէս անել, որ մեր որդենները կարողանան իւրացնել ժամանակակից կուլտուրան, այլ աւելի այն գաղափարը առաջնորդող պէտք է լինի, թէ ինչպէս անենք, որ մեր զաւակները աւելի բարձր կուլտուրա ստեղծել կարողանան։ Սակայն որպէսզի մեր երեխաններն այդ պարտականութիւնը, որը դնում ենք նրանց վրայ, բարեխզնօրին կատարել կարողանան, հարկաւոր է նրանց կրթել ներկայ կուլտուրայի ոգով։ Ներկայ իգէալները, հարցերը, ձգտումները նրանց կողմից գնահատութեան արժանանալը անհրաժեշտ է։ Ներկան շարունակել ցանկացողը չի կարող և չպէտք է կրթուի անցեալ շրջանների կուլտուրայով։ Կրթութեան իգէալները ազգի եգէալներն են։ Սակայն ներկայ դպրոցների, մանաւանդ

^{*)} Պարզ է, որ Օսմանզը էրսպերիմենտակ մանկուգործութեան կողմանակիցն է։

միջնակարգ դպրոցների ձգտումների և ներկայ քաղաքակրթութեան ոգու մէջ անպայման մի մեծ պատռուած է յառաջուցել: Ներկայի գիմնազիան ոգեսորում է անցեալ դարերի իշղէալներով: 16 թդ դարու ինտերնացիօնալ հումանիզմը, որը նորից յարութիւն առաւ 19-րդ դարու սկզբնական շըջաններում և շարունակում է մասամբ մինչև այժմ, մի անընական վիճակի մէջ է ձգել ներկայ միջնակարգ դպրոցներից շատերին՝ և մանաւանդ գիմնազիաներին:

Դայենք ներկային: Կայ արգեօք մի մարդ, որը իսկապէս այնպէս նայէ կեանքին, իր կեանքն այնպէս դառաւորէ, ինչպէս այդ յատուկ էր հին յոյներին և հումէացիներին. Նոյն իսկ բանառէրներն այգապէս չեն. և վերջապէս փորձը ցոյց է տալիս, որ նրանք աղդի իգեալները չեն կարող համարուել ո՛չ մարմնի և ո՛չ էլ հոդու կատարելութեան տեսակէտից: Կեանքը, ըմբռնութեամբ զարգացման են ենթակայ: Մենք հեռացել ենք անցեալից. անցեալի ճաշակն ու ձգտումները չեն կարելի հարկադրական դարձնել ներկայի համար: Այդպէս մտածելը կը լինէր իսկապէս մի յետազիմական քայլներկայի համար: Ապրածը վերասպել նոյնութեամբ անկարելի է: Յունական կուլտուրան արհամարհում էր մարմնական աշխատանքը, որը ներկայ կուլտուրայի հիմքն է կազմում: Դպրոցը պէտք է աղդի ներկայ կարիքներն ու պահանջները ինկախունենայ: Դպրոցն ինքն իր համար գոյութիւն չունի, այլ ժողովրդի պահանջների համար կեանք ունի:

Այսպէս ըմբռնելով դպրոցի նպատակը, մենք նրան ու էալ հիմքերի վրայ ենք դնում և պարզում այն հարցը, թէ ինչ ուղղութեամբ տեղի պէտք է ունենան դպրոցական բարեփոխութիւնները:

Բարեփոխութեան մեջ կարիք ունի միջնակարգ դպրոցը, մանաւանդ հումանիստական գիմնազիան, ուր պարագաները ների ժամերի կէսը լեզուներն են բանում: Լեզուն յարաբերութեան միջոց է, մաքերը արտայացնելու նշանները: Կա կը թական միջոց չէ (Bildungsmittel), այլ ինչպէս ասուեց, յարաբերութեան: Նատերը պնդում են թէ լեզուն մարմնացած տրամաբանութիւն է: Կա միանդ ամայն սիթալ կարծիք է: Լեզուն հակառակութիւնների մարմնացումն է: Լեզուի յարաբերութիւնները այն ժամանակ են կազմակերպուել, եթե իսկի դիտութեան մասին խօսք չէր կարող լինել. և այն նախապատմական ժամանակներում գոյութիւն ունեցող բոլոր անկատար կազմիքները իրեն լեզուի ձևեր (Sprachformen) են զարգացել և լեզուի մէջ քարացած մնացել, թէ և մենք ներկայում

այդ կարծիքներից և ձեւը բոլորովին հեռացել ենք: Օրինակ՝ ներ կարող են ծառայել բազմաթիւ լեզուական բացառութիւնները, որոնք լեզուի անկանոնութիւններ են ցոյց տալիս: արամաբանութիւնը չի կարող որևէ բացառութիւն թոյլ տալ:

Գուցէ ամանք առարկելու լինին, թէ մեծ կապ կայ լեզուններ իմանալու և կուլտուրա ստեղծելու կարողութեան մէջ: Պէտք է իրաւացի ընդունել այն կարծիքը, որ շատ լեզուններ իմանալը չի վնասում: և որոշ չափի օգտակար է կուլտուրական ստեղծագործութեան համար, սակայն ոլէտը է պնդել, որ նա մի անհրաժեշտ հանդամանք չէ: Կուլտուրան չի ստեղծում շատ լեզուններ իմանալու պատճառով: բազմաթիւ հանճարներ միմիայն իրենց մայրենի լեզուն են իմացել, բայց և այնպէս կարողացել են մեծ գործեր տալ: Հոգու յատկանիշները չեն բարձրանում միմիայն լեզու սովորելու միջոցաւ: Սակայն այդ ըոլորից յետոյ ենթարկուելով նախադաշտումների՝ տանջաւմ ենք մեր նոր սերնդին աւելորդ ծանրաբեռնումներով: Որովհետեւ հաղար տարուց էլ առաջ եկեղեցին դպրոցական լեզուն եկեղեցում գործածուող լատիններէնը դարձրեց, մանաւանդ որ այն ժամանակ բոլոր գիտական գլուխածները այդ լեզուով էին, այժմ մենք էլ չենք կարողանում ազատուել անցեալի այդ անպէտք մնացորդից: Նատաւելի լաւ կը լինէք մի օտար լեզուի յայտնի հեղինակների դրուածքների թարդմանութիւնները ուսումնասիրել գպրոցներում, որով աշակերտներն աւելի ի մօտոյ կը ծանօթանային այդ ժողովրդների առանձնայատկութիւնների հետ: Թարդմանութիւնը անհնարին չէ դարձնում յայտնի հեղինակների երկերի հաշակումը: Օտար լեզուի կարիք զգացողը կարող է տպագայում աւելի կարճ ժամանակում գործնական մեթոդների օգնութեամբ սովորել իր ցանկացած լեզուն:

Գիմնազիայի ամենաաչքի ընկնող պակասութիւններից մէկն էլ այն է, որ ուսումնական տարիները շատ—շատ են: Գիմնազիան այժմ 9 դասարան ունի: Պատանիների ստեղծագործութեան լաւագոյն տարիներն անպաղարեր ենք դարձնում նրանց դպրոցի պատերի մէջ զսպած պահելով: Գպրոցական այս սիստեմի վնասակարութիւնը զգալի է մանաւանդ հանճարների համար, որոնք, ինչպէս 0ստվալդն է ասում, առագ են աճում, իսկ այդ աճման ընթացքին համապատասխան չի կարողանում հասուէհաս գործել զպրոցը, ուստի և հանճարները ընդհանրապէս դպրոցից բաւարարութիւն չեն ստանում և նոյն իսկ վնասուում են այնտեղ:

Գիմնազիայի, ինչպէս և միւս միջնակարգ դպրոցների

պակասաւոր կողմերից մէկն էլ այն է, որ նրանք ցանկանում են բոլոր աշակերտներին նոյն կրթութիւնը տալ, նոյն նիւթերով հետաքրքրութիւն կարծեն թէ բոլոր երեխաները նոյն ընդունակութիւններն ունեն: Ճիշտն առաջ մեծ գործերն ստեղծուել են միակողմանի հետաքրքրութիւն ունեցողների ձեռքով: Նատեսը պնդում են, թէ երեխաներից պէտք է ներդաշնորհ մարդիկ պատրաստել, իոկ այդ նպատակին հասնել կարելի է զրանց կարծիքով միմիայն հոգու բոլոր ոյժերի համահաւասար կրթութեամբ: Սակայն ի՞նչ նշանակութիւն ունի իսկապէս ներդաշնորհն ենթակութեան գաղափարը: Զայների ներդաշնակութեան ժամանակ մի որևէ հիմնական ձայն է գոյութիւն ունենում: Նոյնը նաև գոյների ժամանակ մի քանի գոյներ ներդաշնակօրէն ենթարկւում են գլխաւոր գոյնին: Ահա այսպիսի ներդաշնակութեան պէտք է ձգտէ նաև գպրոցը: Գըլխաւոր ուշադրութիւնը զարձած պէտք է լինի աշակերտների առանձին ընդունակութիւնները կրթելու վրայ, որովհետեւ գրամէջ է ամփոփուում անհատական կեանքի արժեքը: Ամեն մարդ պէտք է նախապատրաստուի կեանքի մէջ դեր խաղալու այն ասպարէզում, որի համար նո քնականօրէն կոչւած է, որի համար ժառանգաբար առանձին ընդունակութիւն է բերել:

Եթէ գործին այսպէս նայելու լինենք, այն ժամանակ աշակերտի իմացութիւնները չափելու մասշտաբը քննութիւնները չէինք ընտրել: Քննութիւնների միջոցաւ դիտակցաբար լինասում ենք նոր ներնդի առողջութիւնը և վատնում հոգու ոյժերը, վշացնում տրամադրութիւնը, որպէս զի մեզ հաւատացնենք, որ աւարտելուց առաջ մեր աշակերտներին ճանաչել ենք արգէն:

Եթէ ներկայի գպրոցը և մանաւանդ միջնակարգը վատ է և հիմնական ըարեփոխութիւնների կարոտ, ապա ինչ ձև ու ոդի պէտք է ունենայ ապագայի գպրոցը: Օսվալդը գալիք գըլրոցի տիպի լիակատար ծրագիրը չե տալիս, նրա երեկայութեան մէջ մօտաւորապէս հարթուած են այն ճանապարհները, որի վրայից պէտք է անցնեն ներկայ միջնակարգ գպրոցները, որպէս զի ապագայ գպրոցի տիպին մօտենան: Օսվալդը աւելի քննադատում է և ցոյց է տալիս ներկայ գպրոցի վիրաւոր կողմերը, պակասութիւնները, միակողմաններութիւնները և ապա որոշ հարցերի վերաբերեալ որոշ քարեփոխութիւններ պահանջում: Քննադատութիւնը լաւագոյնը գտնելու առաջին վորձն է: Հարիքը տեսնել, նշանակում է նոր գտնելու ճանապարհի վրա կանգնել: Նոր գպրոցի լիակատար ծրագիրը մշակելու համար անհրաժեշտ է գեռ նախապատրաստական աշխատանքներ կատարելը:

Ուսպէսզի ընթերցողի համար պարզուի, թէ ինչու այնքան խիստ յարձակումների է ենթարկւում գերմանական գիմնազիան, տալիս ենք սաքսօնական գիմնազիաների պաշտօնական մարմինների կողմից հրատարակուած ուսումնական ծրագիրը:

Դասարաններ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	Ընդամենը
	Ա) պարտագիր առարկաններ									
Դրոն	3	3	2	2	2	2	2	2	2	20
Գերմաններէն	4	3	3	2	2	2	3	3	3	25
Լատիններէն	9	9	8	8	8	8	7	7	7	71
Ցունարէն	—	—	—	7	7	7	7	6.7	6.7	40 (42)
Փրանսներէն	—	—	5	3	2	2	2	2	2	18
Ելիարհազբութիւն	1	2	2	2	2	—	3	3	3	28
Պատմութիւն	2	2	2	2	2	—	—	—	—	—
Թուար. և մատիմատիկա	3	4	3	3	4	4	4	4	4	33
Բնական պատմութիւն	2	2	2	2	2	—	—	—	—	—
Փիզիկա	—	—	—	—	—	2	2	2	2	16
Գրել	2	1	—	—	—	—	—	—	—	3
Նկարել	—	2	2	—	—	—	—	—	—	4
	26	28	29	29	29	29	30	29	29	258
Պարտագիր է նաև										
Երգ	2	2	1	1	1	1	1	1	1	12
Ժի ժամ՝ խմբական երգ ևս										
Մարմնամարզութիւն	2	2	2	2	2	2	2	2	2	18
Բ) կամաւոր առարկաններ										
Երբայիցերէն	—	—	—	—	—	2	2	2.1	2.1	5 (6)
Անգլիերէն	—	—	—	—	—	2	2	2.1	2.1	5 (6)
Նկարել	—	—	—	—	—	1.2	1.2	1.2	1.2	—
Ստենօգրաֆիա	—	—	—	—	—	1	1	1	1	2 (3)

Գ. Էղիլեան.